ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Ք. Սևան

29.12.2017թ.
Ժամը 11:30

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան
Անդամներ՝ Խաչիկ Կիրկակոսյան
Ռոմելա Հարությունյան
Մարիանա Առաքելյան
Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1.

1.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

1.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ն , Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանը, <<Դեագա>> ՍՊԸ-ն, <<ԳԱՐԴՄԵՆ>> ՍՊԸ-ն, <<Սվետլանա Աթանեսյան>> ՍՊԸ-ն և <<ԱՊԱՐԱՆՔ ՇԱՆԹ>> ՍՊԸ-ն հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<Սվետլանա Աթանեսյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

<<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, մասնավորապես 8-րդ, 9-րդ, 11-րդ, 22-րդ, 23-րդ և 33-րդ չափաբաժիններով լրացված չէ <<ապրանքային նշանը>> և <<արտադրողի անվանումը>>:

Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, մասնավորապես 4-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժիններով լրացված չէ <<ապրանքային նշանը>>, իսկ 4-րդ, 7-րդ, 10-րդ, 20-րդ, 25-րդ և 31-րդ չափաբաժիններով <<արտադրողի անվանումը>> սյունակում լրացված է արտադրողի անվանումը կամ համարժեք:

<<Դեագա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, մասնավորապես 2-րդ, 19-րդ և 26-րդ չափաբաժիններով <<արտադրողի անվանումը>> սյունակում արտադրողի անվանումը լրացված է թերի՝ նշված չէ արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը:

<<ԳԱՐԴՄԵՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, մասնավորապես 32-րդ և 34-րդ չափաբաժիններով <<արտադրողի անվանումը>> սյունակը լրացված չէ:

<<ԱՊԱՐԱՆՔ ՇԱՆԹ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, մասնավորապես <<տեխնիկական բնութագրերը>> սյունակում նշված չէ պիտանելիության մնացորդային ժամկետը:

1.2 Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը 08.01.2018թ.-ի ժամը 18:00 շտկել անհամապատասխանությունները:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն <<Մակրո Ֆուդ>> ՍՊԸ-ն , Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանը, <<Դեագա>> ՍՊԸ-ն, <<ԳԱՐԴՄԵՆ>> ՍՊԸ-ն, <<Սվետլանա Աթանեսյան>> ՍՊԸ-ն և <<ԱՊԱՐԱՆՔ ՇԱՆԹ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

3. Տեղեկություններ՝ հարցումների և պատասխանների մասին.
(Մ. Սիմոնյան)

3.1 Հարցումներ և պատասխաններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/3 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 09.01.2018թ.-ին ժամը 10:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան